



MUNICIPALITY OF YEREVAN CITY
ՏԵՐԵԲՈՒՆԻ ԻՍՏՈՐԻԿԱԿԱՆ ԵՎ ԱՐԿԱԵՈԼՈԳԻԿԱՆ ԿՈՒԼՏՈՐԱԿԱՆ ԲԱԿԱՐԵՎՈՒՄ

E-mail: erebunimuseum@gmail.com

www.erebuni.am

Հեռ. / Թեա. / Tel.: + 374 10 43 26 61

Մամուլի հաղորդագրություն

5-ը ապրիլի 2011թ.

Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհրդի /ԻԿՕՄՍ/ առաջարկությամբ
ՅՈՒՆԵՍԿՕ-ն 1982-ից ապրիլի 18-ը նշում է որպես **Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օր**:

Այս տարի ժառանգության պահպաններն ողջ աշխարհում կանդորադառնան մշակութային ու բնության
ժառանգությանը՝ **«Ջրի ժառանգությունը»** խորագրի ներքո:

Ջուրը մեր օրգանիզմի և մեզ շրջապատող միջավայրի հիմնական բաղադրիչն է: Կյանքն
առանց ջրի անհնար է. այն կյանքի գոյության սկզբնաղբյուրն է: Ջրի նկատմամբ վերաբերմունքը
ծագում է մարդկային պատմության վաղնջական ժամանակներից: Ջուրն ըստ էության ճանաչված
է որպես սրբացված արժեք՝ աշխարհի բոլոր կողմերում. այն կենտրոնական տեղ է գրավում
աստվածաշնչյան պատմություններում, բուդդայական հավատալիքներում, հինդուիզմում, հին
չինական առասպելներում, Ղուրանում և վերջապես անհնար է առանց ջրի պատկերացնել
Դրախտն ու դրախտային այգիները:

Ջրի նկատմամբ փորձը, գիտելիքներն ու հմտությունները փոխանցվում են սերնդե-
սերունդ՝ սնելով մեր ոչ-մյութական ժառանգության շտեմարանը. Վարդավառը, Ջրօրհները, Ջուր
կաղանդելու սովորույթը այդ շարքից են: Գեղամա լեռներում, Սևանա լճի հյուսիս-արևելյան
ափին, Արագածի լանջերին, Գառնիում և այլուր հայտնաբերված վիշապները հազարամյակներ
առաջ դեռևս խորհրդանշել են ջրի պաշտամունքը Հայաստանում:

Պաշտպանություն, ոռոգում, խմելու ջուր, այս ամենն ունենալու համար էր, որ մեր
նախնիները նախընտրում էին ջրին մոտ ապրել: Դեռևս հնագույն ժամանակներից Սևանի
ավազանը համարվել է բարենպաստ երկրագործության և անասնապահության համար: Մինչև
Ուրարտական պետության կազմավորումը, Սևանի ավազանում ապրում էին ցեղային
միություններ, որոնք իրենց ամրոցները կառուցում էին ջրին մոտ գտնվող բարձրունքների վրա:
Դրա ցայտուն վկայությունն է Սևանի ավազանի իր հարուստ հնագիտական ժառանգությամբ,
մասնավորապես՝ կիկլոպյան ամրոցներով:

Առանց ջրի չկա գյուղատնտեսական և արդյունաբերական ժառանգություն.
Երկրագործության զարգացմամբ է պայմանավորված ջրանցքների կառուցումը, իսկ ամենօրյա
կյանքում ջրօգտագործման թերևս ամենատարածված օրինակները ջրաղացներն են: Ջրային
անիվի հայտնագործությունից մինչև հզոր հիդրոէլեկտրակայանների կառուցում առնչվում է ջրի
ժառանգության հետ:

Իր ստեղծագործական ներուժի շնորհիվ մարդը հայտնագործել է բազմաթիվ հնարքներ՝ ջրի հոսանքին հակառակ շարժվելու համար՝ լաստանավ, մակույկ, նավ, ռազմանավ ու զբոսանավ: Սակայն ջրային հոսանքներով մարդկանց ու ապրանքների անվտանգ տեղափոխման համար ճարտարապետներն ու ինժեներները հայտնագործել են շինության այն տեսակը, որը կոչվում է **կամուրջ**:

Ջուրը նաև ոգեշնչման աղբյուր է. այն պոեզիայի, գրականության, գեղանկարչության, պարի, ճարտարապետության ու քանդակագործության ստեղծագործական աղբյուր է: Ջրագրական հուշարձանները բազմաթիվ են ինչպես ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցուցակում, այնպես էլ ՀՀ Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներում:

Ընդառաջ գնալով «Ջրի ժառանգությունը» միջազգային նախաձեռնությանը՝ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը և «ԻԿՕՄՕՍ/Հայաստան» հասարակական կազմակերպությունը հանդես կգան «Ժառանգությունը և ջուրը» թեմատիկ պաստառների ցուցահանդեսով՝ ընդգծելով ջրի մշտական ներկայությունը ոչ միայն հայկական, այլ նաև համաշխարհային ժառանգության մեջ: «Էրեբունի» արգելոց-թանգարանի ժամանակավոր ցուցահանդեսների սրահում ներկայացված 11 մեծադիր պաստառներից յուրաքանչյուրը և Հուշարձանների ու տեսարժան վայրերի միջազգային օրվա առթիվ թողարկված ազդագիրը հասարակությանը կոչում են համատեղ ուժերով պահպանել ջուր՝ մոլորակի կենսական ռեսուրսը և ժառանգությունը՝ մեր կյանքի ու միջավայրի գեղեցկության երաշխավորը: Ցուցահանդեսի այցելուները հնարավորություն կունենան նաև համտեսել Հայաստանում շշալցվող աղբյուրի ջրի տարբեր տեսակներ:

Ապրիլի 18-ին՝ Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրվան ընդառաջ, ՀՀ պաշտպանության նախարարության և արգելոց-թանգարանի միջև վերջին տարիներին ձևավորված համագործակցության շրջանակում, Նուբարաշենի 5-րդ բանակային կորպուսի զինձառայողները 2011թ. ապրիլի 14-ին մաքրման աշխատանքներ կիրականացնեն Էրեբունի, Շենգավիթ և Կարմիր բլուր հնավայրերի տարածքներում: Միջոցառումների շարքը կավարտվի ապրիլի 18-ին ժառանգության հայ պահապանների այցելությամբ «Սևան-Հրազդան» կասկադ՝ ՀՀ միացյալ էներգահամակարգը սնող արդյունաբերական հսկան, որը պահպանվում է պետության կողմից՝ որպես 20-րդ դարի արդյունաբերական ժառանգության օրինակ:

Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրվան նվիրված «Ժառանգությունը և ջուրը» ցուցահանդեսի բացումը տեղի կունենա «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանում, 2011թ. ապրիլի 16-ին ժամը՝ 12:00-ին:
/ք. Երևան, Էրեբունու փող. 38, հեռ.՝ 43 89 53/:

«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան